

ՀԱՍԿԵՐԻ
ԸՆԴՀԱԿՄԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

XII

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ՄԵՆԿԱԿԱՆ ԽԸՆԵՐ

Խայբագրեց
ԱՏ. Լիսինեան

Թիֆլիս

796
Ճ-84

25 OCT 2010

«ՀՈՍԿԵՐ»-Ի ՊԵՆԱՎԱՐԺԵԿԵՆ ԳՐԱԴԱՐԱՆ

36648-62

796 | Հողագործութեան
2-84 Սահմանական
լուսաւոր

1907:

ՓԼԲ			
Կրց.	յանձ.	Կ/Մ	80

296

- 84

XII

ՓՈՂԱՎՐԹԱԿԱՆ

ԱԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ



Թ Ե Յ Լ Ի Ս
Եվրոպական սպուռք Հ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ
1907



8821

25 APR 2013

Այս զքբոյկը կազմելիս, աշխատեցի տակ մի-
այն այն խաղերը, որոնք չը կան պահ. Յարիսու-
դարեանի կազմած «Մանկական խաղեր» (1895 թ.)
ժողովածի մէջ, կամ տարբերութ են այնտեղ
պերածներից: Քաղցր պարտականութիւն եւ հա-
մարութ իմ առանձին շնորհակալութիւնս յայտ-
նելու պ. Սենեքենեմ Տէր-Սահակեանին եւ մա-
սաւանդ պ. Երանդ Հալայեանին, որոնք չա-
փազանց օժանդակեցին ինձ՝ իմ տրամադրութնան
տակ դնելով իրենց ծեռագիր հաւաքածունեցը:

Ս. Էփիցեան

36648-62

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Մայրենի բնութագրիւնը եւ խաղացողների հերթի սահմա-
նութը.

1. Երկու խմբի բաժանելը: - Խաղից առաջ երկու
մեծ և ճարպիկ երեխայ մայր են ընտրութ: Մյուսնետև
բոլոր խաղացողները երկու խմբի են բաժանութ: «հա-
լա-հալա» գալով: Խաղացողները զոյգ-զոյգ առանձնա-
նութ են և իրենց ծածուկ անուններ են նշանակութ,
ապա գալով մայրերի մօտ «հալա» են ասութ: «Հալա-
հալա»—«Ընկերայ սալա»,—պատասխանութ է մայրերից
մէկը: Խաղացողները տալիս են իրենց ծածկանուննե-
րը և հարցնութ: «Եռուն և թէ թէրդի գուոր»: կամ
«ցորենն ես թէ գարին»: Նախ մէկ մայրն է ընտրութ
— «Նուոր» կամ «գարին» և վերցնութ է ընտրածին իր
կողմը: հարցնողներից միւսը մնութ է միւս մօրը: Յա-
ջորդ զոյգն է մօտենութ և ասութ իր ծածկանունները:
Այս անգամ ընտրողը լինութ է միւս մայրը: Այսպէս
բոլոր խաղացողները բաժանութ-են երկու մասի:

Այնուհետև որոշութ են թէ այդ խմբերից որը
պէտք է առաջինը սկսի խաղը կամ ներգործական
գերը կատարի, Դրա համար հետեւել ձեւերը կան:

ա) Մայրերը միմեանցից քիչ հեռաւորութեամբ դէմ առ դէմ կանգնում են: Նրանցից մէկը մի ոտը առաջ է փոխում և ասում. «Հոպալէ, հոպալէ»: Դիմացինը նոյնալէս մի քայլ առաջ է փոխում՝ պատասխանելով. «Պարա թոպակէ»: Այսուհետեւ կրկին մի ոտ մօտենում է առաջինը, ապա երկրորդը: Այսպէս մինչև որ մէկի ոտքը կպչում է միւսի ոտին: Որի ոտը կըպչում է, նա է խաղը սկսողը կամ յարձակողը. «Քեստողը»:

բ) Մի փայտ օդում վեր են ձգում: Մայրերից մէկը աշխատում է փայտը բռնել: Այսուհետեւ որտեղից որ նա բռնեց, միւսը բռնում է փայտը նրա ձեռքի վերեից, կպցնելով իր ձեռքը նրա ձեռքին: Յետոյ կրկին բռնում է առաջինը՝ նոյնալէս իր ձեռքը երկրորդի ձեռքին կպցնելով, ապա երկրորդը. այսպէս շարունակում են, մինչև որ մէկի ձեռքը նասնում է փայտի ծայրին: Որի ձեռքին որ փայտի ծայրը մնաց, նրա կողմն է սկսողը:

գ) Մայրերից մէկը վերցնում է մի տափակ քար, թքում է նրա մի կողմի վրա ու հարցնում միւսին. «Թացն ես թէ չորը»: Քարը ձգում են օդի մէջ: Եթէ երկրորդի ցանկացած երեսն ելաւ, սկսողը հօ նրա խումբն է. Եթէ ոչ՝ առաջինի խումբը:

դ) Մայրերից մէկը վերցնում է մի դրամ և հարցնում է միւս կողմին. «Արծիւն թէ զիրը»: և նախորդ ձեի պէս օդի մէջ ձգում: Եթէ երկրորդի ցանկացած երեսն է դուրս գալիս, սկսողը նրա խումբն է:

ե) Մայրերից մէկը բռան մէջ ծածուկ քար է

պահում և երկու բռունցքն էլ ամուր սեղմած՝ առաջ է րերում, ինչպէս «Ճուխտ ու կենտ» խաղի մէջ, ու հարցնում է դիմացինին. «Փուչն ես թէ տռուղը»: Երկրորդը ընտրում է փուչը կամ տռուղը և խփում երկու բռունցքներից մէկին. Եթէ նրա ցանկացածը դուրս ելաւ, սկսողը նրա կողմն է:

2. Ոլի կզիւ. – Եթէ խաղի մէջ չի պահանջւում երկու խմբի բաժանւել, այլ հարկաւոր է լինում որոշել թէ օրինակ՝ ովկ կզւի, կամ ովկ բնումը կանգնի, կամ ովկ գետնին նստի, պլիկ են բաց անում: Խաղացողներից մէկը իր բուռն է առնում մի փոքրիկ քար, որ պլիկ է կոչւում, և երկու բռունցքն էլ սեղմած՝ առաջարկում է մէկն ու մէկին բաց անել: Սա խփում է ձեռքերից մէկին. Եթէ քարն է դուրս գալիս, հօ առաջինը ազատում է և զանում է վարպետ (առաջին թոչող, խաղ սկսող), իսկ քարը մնում է երկրորդին, որը նոյն ձեռք առաջարկում է երրորդին և այլն: Եթէ փուչն է դուրս գալիս, խփողը ազատում է, իսկ ում մօտ քարը մնում է, նա դիմում է հետեւալ ընկերոջը: Ում մօտ որ վերջին անգամն է մնում քարը, նա է կզւողը, կամ բնում կանգնողը, կամ գետնին նստողը:

իսկ նրանք էլ աշխատում են մէկին բռնել: Եթէ որևէ
մէկին բռնեցին, սա և իր ընկերը շատապով պէտք է ի-
րար ձեռք-ձեռքի տան և այսպէս շարունակեն խաղը:

3. Հ Ա Բ Ա Յ - Մ Օ Լ Լ Ա

Բաժանուում են երկու խմբի: Առեն մի խմբում
լինում է մէկը աշքերը փակող, մէկ խմբում՝ Ա., միւս
խմբում՝ Բ.: Ա.-ի ընկերները պահուում են, իսկ Ա.-ն
մնում է Բ.-ի ընկերների մօտ և բնի մօտ փակում է
Բ.-ի աչքերը: Երբ իր ընկերները արդէն պահած են
լինում, Ա.-ն բաց է անում Բ.-ի աչքերը. սա գնում է
պահաւանիրին փնտուելու, իսկ Ա.-ն աշխատում է Բ.-ի
ընկերներին հեռացնել բնի մատից: Երբ բաւական հե-
ռացրած է լինում, աղազակում է. «Հարայ-մօլլա»—
իր ընկերները թագստի տեղից դուրս են գալիս և աշ-
խատում են բռնել Բ.-ի ընկերներին (բայց իրեն Բ.-ին
իրաւոնք չունեն ձեռք տալու). Եթէ որ և է մէկին
բռնեցին, այն ժամանակ յաղթեցին Ա.-ի ընկերները,
իսկ եթէ Բ.-ի ընկերները կարողացան առանց բռնե-
լու բոլորը բռնը հասնել, կը նշանակի գըանք յաղթե-
ցին և այժմ պէտք է Ա.-ի աչքերը փակեն և այդպէս
շարունակ:

Եթէ Բ.-ը տեսաւ պահածներից մէկին, նա է
կանչում «Հարայ-մօլլա» ու իր ընկերներով վագում
դէպի բռն. պահածները պիտի դուրս գան նրանց
բռնելու:

4. Գ Ա Լ Լ Ա Բ Բ Օ Բ Ա X

Մի փոքրիկ փոս են փորում. մէկը մի ոտքը

Խաղեր առանց գործիքի

1. Գ Ա Բ Ն Ա Ի Գ Ա Յ Լ Բ

Մեծ մասամբ փոքրահասակ երեխաներ հաւաք-
ուում են, ընտրում են իրենց միջից մի գայլ, մի հո-
գիւ, իսկ միւսները լինում են շներ: Որոշում են գայ-
լի բռնը, գառների մակաղատեղին, և բոլորի գլխարկ-
ները դնում են այնտեղ իրեկ գառներ: Հովիւը կեղծ
կերպով բռնում է մի տեղ, շներին էլ մի-մի տեղ նստե-
ցնում է, թագ կացնում գայլը կամացուկ գալիս է, հո-
տոտում մէկ-մէկ և հէց գլխարկներից մէկը բերանով
վերցնում է և սկսում է փախչել, հովիւը աղաղակում
է «հարայ, գառը տարան»: Շները յարձակում են. թէ
կարողացան բռնել մինչեւ բռնը հասնելը, կըծեծեն, իսկ
եթէ ոչ բնին հասնելուց յետոյ են մօտենում, գայլն
է սկսում նրանց խեղգոտել:

2. Զ Ի Տ Ա Տ Մ Բ Ի X

Բաժանուում են երկու-երկու ընկեր և ապա եր-
կու ընկեր բռնում են միմեանց ձեռքից (մէկը աջ ձեռ-
քով, միւսը ձախ): Միւսները սկսում են նրանց խփել,

զնում է այդ փոսի մէջ, միւս ոտքով աշխատում է խփել միւսներին, իսկ միւսները աշխատում են թակել նրան: Եթք ներսինը մէկին խփեց ոտքով, դա համար- ում է կտրւած և դա է ներս մտնում և այսպէս շա- րունակում է:

χ 5. u q u q u

Բաժմանում են երկու խմբի և 20-30 քայլ հեռաւորութեամբ (նայելով հասակներին) կանգնում են միմեանց հանդէպ իրար ձեռքից բռնած: Աճին մի խրաբում լինում է մայր: Յետոյ մայրերը հերթով սկսում են հարց ու պատասխան:

- ա) Ազադա:
բ) Ազլինդագազ:
մ) Տաղաշա:
ը) Տաղդինդուչա:
ա) Բէլաշա:
ը) Բէլինդուչա:

ս) Տեսնենք, տեսնենք, ով պիտի գայ:
ը) Հլէ (զիմացինի խմբից մի որհետ անուն
է տալիս, օր. Աշճակ, Սօնա և այն) գայ, շուտ
գայ:

Երբ մէկի անունը տալիս են, սա պէտք է վագի և դիմացիներից երկուսի (որոնց ինքն ընտրեց) ձեռքից միմեանցից բաժանի (բայց չէ թէ ձեռքերով, այլ մարմնի հարւածով): Եթէ չը կարողացաւ, ինքը կը մնայ նրանց մօտ և նրանց ընկերը կը համարւի: Իսկ եթէ կարողացաւ կտրել հակառակ խոժ-

բի անդամներից մէկին, կտրած տեղի աջակողմեան
կամ ձախակողմեան խաղացողին. տանում է իրը
իրենց ընկեր իր բանակը: Այսպէս շարունակւում է,
մինչև որ այս կամ այն շղթայի մէջ էլ խաղացող չի
մնում:

6. ԱԶՔԱԽԸՆՓՈՒԿ ԿԱՄ ՊԱՀՄԸՆՑՈՑԻԿ

Սովորաբար խաղում են այնպիսի տեղերում, ուր թագ կենալու յարմարութիւններ կան: Նախ նշանակում են ըռւնը, և վիճակով ընտրում մինին, որ առաջինը խփելու է աչքերը: Այս կոչում է բուրբու, մինչդեռ յետոյ խփողները կոչում են շուն: Բուրբուն ընում ձեռքերով խփում է աչքերը: Նրան հարցնում են: «Անունդ ի՞նչ է»: «Ալի, Ալի», պատասխանում է բուրբուն, լինի նա տղայ թէ աղջիկ: «Թէ որ նայես՝ աչքիցդ լուսը հալի, հալի, վայր թափի, մի թոփ ասեղ մէջը իրի», ասէծք են զնում միւսները և վազում թագ կենում: Երբ բոլորը թագնում են, մինը ըզաւում է: «Քիատի», որով բուրբուին իմացնում են, թէ բոլորը թագնաւած են և կարող ես աչքերդ բանալ: Իսկոյն բուրբուն կանչում է «Զիտտի» և բաց անում աչքերը: Այս խօսքով էլ նա իմացնում է պահմտածներին, թէ արդէն բաց է անում աչքերը: Բուրբուն պլաստում է պահմտածներին և եթէ մինին նկատի, իսկոյն ինչպէս ինքը, այնպէս և նկատածը վազում են բունը: Եթէ նկատածը առաջինը կարողացաւ համել բնին և թքել, կազատուի, իսկ եթէ ոչ՝ կը դառնայ շուն, միւս անգամին կը խփի աչքերը: Յետոյ բուրբուն պտրում

է միւսներին և գտածի հետ վազում բունը թքելու: Եթէ պահմտածները յարմար առիթ գտնեն, դեռ չը նկատած վազում են դէպի բունը թքում և աղատում շուն լինելուց: Նկատածներն էլ եթէ կամենան իմացնել պահմտածներին թէ յարմար է դուրս գալ և վազել բունը, կանչում են. «Գունտ ու կծիկ դուրս թըռէք»: Այսպէս դուրս են գալիս բոլոր թագ կացածները և ով առաջինը չի կարողացել բուրբուից առաջ հասնել բնին և թքել, դառնում է շուն և խաղը նոյնկերպ կրկնում է:

7. Լ Ա Լ Օ Յ Ի Ն Ի

Այս խաղի ժամանակ պահանջնում է պահպանել խորին լուռթիւն: Խաղացողները միմիանց մօտ ծալապատիկ նստում են շրջանաձև: Մօր հ'առ բոլորը շրջացնելով, դաստակները բաց՝ բարձրացնում են ձեռները մինչև գլուխը և խփում ծնկներին: Մայրը աջ ձեռով խփում է իր աջ կողմը նստողի ձեռքերին և զանազան նշաններ անում, օր. ձախ ձեռով բռնում է նրա քիթը, աջ ձեռի ցուցամատը բռնում վրան, ձեացնելով իր թէ կտրում է և դնում նրա բերանը, կամ մի-մի կամաց ապտակ խփում այտերին և բաշում է մի ականջը և այլն: Ապա յաջորդի վրա ցոյց տալով՝ մայրը կարճ շվացնում է, որով հասկացնում է, թէ միենոյնը կրկնիր կամ ցոյց տուր ընկերիդ վրա: Նորից մօր հետ բոլորը շվացնելով բարձրացնում են ձեռքերը, խփում ծնկներին, և նոյնը առաջինը կրկնում է աջ հարեանի վրա: Այսպէս բոլորը յաջորդաբար

կրկնում են մօր արածները և երբ վերջինը նոյնը անում է մօր վրա, սա մի ուրիշ բան է անում, որը նոյնութեամբ բոլորից կրկնում է: Եթէ մինը չի կարողանում մօր արածը նոյնութեամբ կրկնել կամ խօսում է, նրան «զըմիկացնում են»—բռնում են ոտներից ու գլխից, բարձրացնում են և մէջը մի քանի անզամ գետնին խփում: Երբեմն մայրը նշաններով կանչում է մինին շրջանի մէջ և հրամայում է նրան զանազան գերեր լուելեայն կատարել, օր. կատու ձեանալ և մուկ բռնել, մինին կապկի պէս խաղացնել, մի ուրիշին շարկած ման ածել, սրան նրան տնազ անել և այլն: Եթէ մինը չը կարողանայ լիովին, ճշտութեամբ կամ առանց ծիծաղելու կատարել առաջնորդի հրամանը, նրան ևս «զըմիկացնում է են»:

Երբեմն մայրը մրոտում է մատները և զանազան նաշխեր է քաշում իր երկու կողմը նստողն երի երեսներին, այնպէս որ սրանք բոլորովին չեն իմանում և ապշած նայում են իրենց վրա ծիծաղող ընկերներին: Եթէ մայրը շատ խիստ է լինում, խաղացողները նշաններով համաձայնութիւն են կայացնում և անձայն թափում են առաջնորդի վրա ու նրան ևս «զըմիկացնում են», երբեմն էլ գահընկէց անում ու նոր մայր ընտրում:

8. Տ Ը Զ - Տ Ը Զ

Խաղում են միայն երեք երեխայ, մինը կոչում է մեղու, կանգնում է երկուսի միջև, ոտները բացած դնում է նրանց՝ մէկի աջ, միւսի ձախ ոտների վրա և ծածկում

մի գտակ: Սրա աջ կողմը կանգնողը իր աջ դաստակը բաց գնում է իր ձախ այտի վրա, իսկ ձախ կողմը կանգնողը՝ իր ձախ դաստակը բաց գնում է իր աջ այտին: Մեզուն երկու ցուցամատները զնում է իր քըթին և աջ ու ձախ օրօրէելով արգարզում է, ու յանկարծ ապահակ խփում կողքիներից մինի դաստակին, աշխատելով կուչ զայր որ ապահակ ուսուղը իսկոյն չը կարողանայ իր ազատ ձեռքով խփել, վայր զցել զըտակը: Գտակը վայր զցողը դառնում է մեղու, իսկ մեղուն կանգնում է նրա տեղը:

9. ♫ Զ Ո Բ Ա. Ն-Զ Ո Բ Ա. Ն

Առաւելապէս խաղում են աղջիկները և խաղացողների թիւը չի սահմանափակում, որքան շատ, այնքան լաւ: Բարում են միմեանց ձեռքից և ուղիղ գծով կանգնում, ծայրիններից մինը հարցնում է, իսկ միւսը պատասխանում: «Չորան, չորան», գիտ չորան: «Մեր ոչխարը ուր գնաց»: «Ալա սարը»: «Ի՞նչ է ուտում»: «Խուռամա»: «Ի՞նչ է խմում»: «Հուռմա»: «Ձուռնով գամը թէ դաւուլով»: Եթէ պատասխանն է «զուռնով», մի ծայրը «զըռ-զըռ» անելով, իսկ եթէ «գաւուլով» «զըմք-զըմք» անելով գնում անցնում է միւս ծայրի վերջին զոյգի թէի տակով, յետոյ երկրորդի, երրորդի և այլն, առանց ձեռները բաց թողնելու, որով նրանք բոլորը կաղմում են մի շղթայ, ձեռքերը կըրծքերի վրա խաչաձևած: Բոլորը մնում են կանգնած, իսկ երկու ծայրինները պըպզում են, առաջինը երեք անգամ ձայնում է երկրորդին: «Ժամկոչ ամի», վերջապէս

սում է երկրորդը և կանչում,—Հրամմէ: «Մէկ կրակ տուր», խնդրում է տուաջինը:—Ահա՝ ասում է երկրորդը: «Մէկ էլ տուր, սա մարեց»,—կրկնում է առաջինը:—Ահա: «Մէկ էլ, սա էլ մարեց»—Ահա: «Սա վառաջինը:—Ահա, առաջինը և ձեւցնում, իրը թէ ծխաքարչ է ծխում: «Ժամկոչ ամի», կրկին կանչում է առաջինը:—Հրամմէ, պատասխանում է երկրորդը: «Թագաւորն ասաւ թէ փաշա ենք առել մի քիչ սխտոր ծեծեցէք»: Բոլորը խփում են ոտները գետնին և «սըխ սըխ» ասում: յետոյ նորից առաջին մայրը կանչում է երկրորդին: «Ժամկոչ ամի»—Հրամմէ: «Թագաւորն ասեալ թէ լւացը ենք արել, չւանը կարճ է», ասում է առաջինը:—«Բաշենք, երկարի» պատասխանում է երկրորդը և բաշում են: Զեռքը բաց թողնողին, եթէ ուղղաներ են «զըխիկ» են խփում, իսկ եթէ աղջիկներ, մի որևէ պատիժ տալիս:

10. Ե Ա Տ Ա. Բ Ա. Յ Ա. *

«Ես տարայ» ասելով խփում են մինին և փախչում, իսկ սա, որ շուն է կոչում, աշխատում է բռնել խփողին առանց մի ուրիշից հարւած ուտելու, և եթէ աջողեցրեց՝ բռնւածն է զառնում շուն:

11. Զ Ո Ւ Բ Ա. Բ Ա. Յ Ա.

Նախ փայտով կամ ոսկով գծում են գետնին 5—7 սաժէն երկարութեան մի շրջան, բաժանուու երկու խմբի, վիճակով մի խուժքը կանգնում է շրջանի մօտ և աշխատում է թոյլ չը տալ միւս խմբի անդամ-

Ներին մտնելու շրջանի մէջ։ Այս նպատակով նրանք ձեռով խփում են շրջանին մօտեցողներին, որով վեր ջիններս «մեռնում են»—դադարում են խաղալուց։

Միւս խմբի անդամներն աշխատում են վազել անցնել ա. խմբի երկու անդամի միջով։ Եթէ երկրորդ խմբից մէկը առանց խփելու մտնի շրջանի մէջ և ասի «չուռ առայ», այն ժամանակ սա մի յաղթութիւն է լինում ա. խմբի վրա։ Խմբերը փոխում են տեղերը և խաղը նոյնկերպ շարունակուում է։ Նոյնն է լինում, երբ մի խմբի բոլոր անդամները «մեռնում են»։

12. ԳԱՅԼԻ ԱՂԻԿՍԻՒՆ ՀԱՍՏԻ

Մի երեխայի ձեռքերից բռնում են երկու երեխաներ, որոնցից մինը կոչում է գայլ, իսկ միւսը՝ աղւէս։ Գէլը վազում է աղւէսի ետևից, աշխատելով բռնել նրան, և եթէ աղողի՛ ինքը դառնում է աղւէս, իսկ աղւէսը գայլ և նորից գայլը աղւէսի ետևից է վազում։ Սրանց վազելու ժամանակ, նրանց ձեռքերը բըռնող երեխան պտտում է ու ասում, «գայլն աղւէսին հասաւ, գայլն աղւէսին հասաւ»։

13. ՊՈՒՏ-ՊՈՒՏ

Այս խաղը սովորաբար խաղում են աղջիկները։ Փոքրիկ աղջիկները շրջանաձև պըպզում են և իւրաքանչիւրի մօտ կանգ՝ ում է նրանից փոքր ինչ մեծ աղջիկը։ Պըպզող աղջիկները կոչում են պուտ և նրանց երբեմն փոխարինում են փոքր ինչ մեծ քարեր, կանգնողներից միայն մինը պուտ չի ունենում և կոչում է շուն։

Հերթով մօտենում է շունը մի պուտի և հարցը՝ նում կանգնողին։

«Ի՞նչ ուտենաք»։

— Զիր ու չամիչ, —պատասխանում է կանգնողը։ «Բ՞րտեղից ուտենաք. — հարցնում է շունը։

— Գողանանք ուտենաք. կամ «Ճէրտէրանց տնից» և կամ մի ուրիշ տեղից—որոշում է կանգնողը։

«Ծափ տանք, վազենք». — ասում է շունը։ Եւ երկուսն էլ ծափ են տալիս ու հակառակ կողմերով վազում։ Եթէ շունը շրջան անելով՝ միւս վազողից շուտ հասաւ նրա պուտին, ինքն է լինում դրա տէրը. իսկ միւսը դառնում է շուն և գնում միենոյն հարցումը տալիս գրկից պուտին։ Իսկ եթէ շունը չը հասաւ, դարձեալ մնում է շուն և գնում նոյն հարցը առաջարկում միւս պուտին։

Վազելիս եթէ մինը շրջանի միջով անցնի, նրան պատժում են, եթէ խաղացողները տպաներ են «զըխկ են զարկում» իսկ եթէ աղջիկներ՝ մի այլ պատիժ են տալիս։

14. Ո Տ Ք Հ Ա Մ Ր Ե Լ

Խաղացողները, որոնց թիւը չի սահմանափակւում, միմեանց մօտ շրջանաձև պըպզում են։ Մինը իր ծնկից սկսելով համարում է բոլորի ծնկները մինչև տասը։ Տասներորդը հայ է քաշում ոտը։ Համբանըը շարունակում է դարձեալ մէկից մինչև ասալ։ Երբ մնում է միայն մինի ծունկը, այն ժամանակ բոլորը վեր են կենում և շրջան բռնում, առնելով մնացողին շրջանի

մէջ: Սա այնուհետև կոչւում է շուն: Շրջան բանողները առանձնապէս յարմար միջոցին բաց են թողնում ձեռքերը, խփում շանը և նորից ձեռքերը բռնում: Խաղը այսպէս շարունակւում է, մինչև որ շունը մինի բաց թողած ձեռքը բռնի և գետնին թրի: այն ժամանակ այդ երկուսը փոխում են իրենց տեղերը և նոյն կերպ շարունակւում է խաղը:

15. ՀՐԵՇՏԱԿ ԵՒ ՍԱՏԱՆԱՅ

15: Խաղացողներից մէկը ընտրւում է հրեշտակ, միւսը սատանայ, մէկն էլ դանում է մաշածների մայր և ամենքին տալիս է միմի ոսկեղինի, լուսատի, քաղաքի, գիւղի և այլ կեղծ անունը: Հրեշտակն ու սատանան իրար կորքին կանգնում են և առաջ հրեշտակը, ոտք գետնին զարնելով, ասում է: «ԶԵԽԿ-ՀԵԽԿ»: Մայրը պատասխանում է: «Ո՞վ է».—«Հրեշտակն է»: —«Ի՞նչ ես ուզում»: Հրեշտակը որ և է անուն է տալիս: Եթէ այդ անունը խաղացողներից որ և է մէկի վրա դրւած է, հրեշտակը առնում, տանում է նրան: Հերթը գալիս է սատանին: Նա ու մինչնոյն կերպով դուռը ծեծում է և մի անուն տալիս: Այսպէս շարունակում է, մինչև որ բոլոր երեխաները դառնում են հրեշտակի կամ սատանի բաժին: Յետոյ բոլոր կողմանակիցները շարւում է իրենց ընտրողի հոմից, զրկելով միմեանց գոտանեղից: Ապա հրեշտակն ու սատանան կանգնում են գետնին խաղած մի գծի մօտ, երկու մարդերը իրար են տալիս և ոտները սահմանի վրա գտնուի առավ քաշում են հակառակ կողմը: Եթէ սա-

տանի կողմնակիցները հրեշտակի կողմ անցնեն, յաղթւած են, իսկ եթէ հրեշտակի կողմնակիցներն են յաղթւում, դառնութ են մեղաւոր և միւսները նրանց վրա թափէելով՝ ծեծում են:

16. Ա. Լ. Ա. Բ Է Կ Ի Կ Ա. Տ Ո Ւ Ւ

Մայրը իր զաւակներին կանգնեցնում է իր շուրջը և ոչխարների պէս կթում է: Մի տղայ էլ երրեկ կատու գալիս է ու կանչում. «միանու, միանու»:—«Ո՞ւմ կատուն ես»,—հարցնում է մայրը: «Ալաբէկի»,—պատասխանում է կատուն: «Ի՞նչ ես ուզում»:—«Մեր ու մածուն»: «Ո՞ւմը պիտի տանես».—«Իմ ձագերին»:—Այն ժամանակ մայրն ասում է: «Փըշտ, վըշտ, կորի, տիրամեռ կատու»: Այսպէս ասելով մայրը շարունակում է կթիւ, մինչև որ բոլոր ոչխարներն էլ կթի: Մայրը վեր է կենում, կաթը դնում է մէկ խաղացողի գլխին, բոլորի աչքերը կապում է, առջևի փէշերը բերաններն է տալիս, ասում է. «ինչը կացէք, գնամ լացւեմ», էս է կը գամ», գնում է շրջանից դուրս: Կատուն ներն է մտնում, կաթը թափում է, աչքերի կապերը արձակում է, փէշերը քաշում է բերաններից ու փախչում: Ոչխարները լալիս են: Մայրը գալիս է ու հարցնում մէկին: «Կաթը ով թափեց»: «Ես չը գիտեմ, նու գիտի»: Մայրը մօտենում է մատնանշած հարեւանին: «Կաթը ով թափեց»—«Ես չը գիտեմ, նա գիտի».—Վերջինը ասում է: «կատուն թափեց»: Մայրը վաղում է կատεրին ծեծելու, բոլոր երեխաները ճախով ետևիցն են ընկնում, բռնում կատεրին, ծեծե գլուխում:

17. ԱՆՆԱ ՄԱՐԻԿ, ՈՐ ԶԵ՞Մ ՏԱՅ

Երեխաներից (մեծ մասամբ աղջիկներն են խաղում են այս խաղը) մէկը լինում է մայր, միւսը անդրանիկ, որ մօր ետևն է բռնում, իսկ մնացածները իրար ետևից են բռնում: Աղջիկներից մէկը գայլ է դառնում: Նա գալիս է ու անում մօրը. «Ինձ այս առից անց կացրն»: —«Կարող ես, ինքդ թոփր», —պատռսխանում է մայրը: Նա էլ մէկ ոտով թռչում է. յետոյ ասում է. «Ինձ այս գետից անց կացրն» — «Կարող ես, ինքդ թոփր»: Սյա անգամ գայլը երկու ոտով է թռչում, գալիս է մօր մօտ և ասում. «Մայրիկս հիւանդ է, քեզնից կաթ է ուզում»: Նա էլ պատասխանում է, «Գառներս գեռ չեն եկել»: Այդ ժամանակ միւս կողմից գառները (ետեր շարւած մանուկները) կանչում են. «Քէ, ըէ, ըէ»: Մայրը կթում է և տալիս է գայլին, նա էլ գնում է, բայց յետոյ կրկին գալիս է. «Սև կատուն թափից, մէկ կտոր էլ տնըր»: Մայրը այս անգամ չի տալիս: Գայլը կանչում է. «Կը գամ, զոռով կը տանեմ»: Մայրը սկսում է թերը տարածել, իր գառները պաշտպանել ու բոլորը միասին ասում են: «Աննա մարիկ, որ չեմ տայ»: Դիմացինը կրկում է «Աննա մարիկ, որ կը տանեմ», և այսպէս ցատկուում են: Եթէ գայլը կարողացաւ իր ձեռքը մէկ խաղացողին կպցնել, տանում է մի կողմ ու վերագառնում: Այսպէս շարունակում է, մինչև որ մնում է անդրանիկը: Սրան պէտք է հօթն անգամ դիպչէլ: Յետոյ գայլը բեռում է բոլոր գառներին կանգնացնում ու ասում.

«Ջուրը տաքացրել եմ, ձեր բուրդը պիտի լւանամ»: Անդրանիկից է սկսում: Անդրանիկն ասում է. «Վայ, ջուրը տաք է»: «Դնացէք, սառը ջուր բերեք» — հրամայում է գայլը միւս գառներին: — «Զենք գնայ»: Գայլը ստիպւած ինքն է զնում: Հենց որ սա ըիշ հեռանում է, անդրանիկը փախչում է մօր մօտ, որը հեռանում կանգնած է: Եթէ գայլը հասաւ բռնեց, ոչ ետ է բերում և նորից սկսում է տաք ջրով նրա բուրգը լւանալ: Եւ այսպէս մ՛նչև որ բոլոր գառները փախչեն իրենց մօր մօտ: Յետոյ ուրիշներն են դառնում մայր և գայլ, և խաղը սկզբից սկսում է:

18. Գ Մ Բ Օ ~ Գ Մ Բ Օ

Իրարից հեռու, հրապարակի ծայրերին, երկու գիծ են անց կացնում գետնին և բաժանուում են երկու խմբի: Ամէն մէկ խումբը կանգնում է մի գծի մօտ, սկսող խմբից մէկը մօտենում է միւս խմբից ումը որ կամենայ: Սա իր ափը պարզում է. Եկողը ասում է. «Իմրօ, դմբօ» — «Համ», պատասխանում է միւսը: — «Քո մայրը ի՞նչ է եփել»: — «Քալաճօշ»: Մէջն ի՞նչ է զցել»: — «Կատոի դօշ»: «Քեզի ի՞նչ է կորել»: — «Ուկի մատնիք»: — «Ո՞ւր է կորել»: — «Ժամի տանիք»: — «Ես եմ եկտը ու չեմ տայ»: — ասելով եկողը զարկում է պարզած ափին ու փախչում դէպի իրենց բունը: Զարկուողը ետևից վագում է: Եթէ ձեռքով խփեց փախչողին մինչև բռնը հասնելը, վերջինս մեռնում է ու կանգնում է հակառակորդի ընի ետև, իսկ կտրողը ինքն է մօտենումդիմացի բանակին և «դմբօ-դմբօ» ասում:

Եթէ զարկւողը փախաւ իր բունը, սպասում է խաղալու իր հերթին, իսկ նրա տեղ իր կողմակիցներից ուրիշն է դուրս գալիս: Որ կողմից որ աւելի շուտ բուրը կտրւեն, նա է յաղթւածը:

19. ԲԱՌ ՈՎՀ ՏԱՐԱՒԻ

Խաղացողները նստուում են շրջանաձև, մէջտեղ կանգնում է մէկը, որից ընկերները մէկ բան են առնում որ պահեն: Սա դառնում է մէկին և հարցնում «բա մվ տարաւ»: — Նա պատախանում է. «Ես երբ տարայ, հա նա տարաւ»: Որոնողը վազում է նրա մօտ ուժ մօտ կարծում է թէ պահւած է իրը. դիմելով նոյն հարցով՝ աշխատում է գտնել իրը, մինչդեռ նստուածները գաղտնի ձեռքէ ձեռք են անց կացնում այդ իրը: Ում մօտ որ իրը բռնուում է, նա է նստում մէջտեղ և որոնում, իսկ նախորդը նստում է նրա տեղը:

20. Ա. Զ Ք Խ Փ Ո Յ Ի Կ

20. Մէկի աչքը կապում են և սկսում են չորս կողմից հրել, գարուն և փախչել: Երբ աչքերը կապած կարողացաւ մէկին բռնել, նրան ազատում են և բռնողի աչքերն են կապում: Երբեմն խաղացողներից երկուսի աչքերն են միաժամանակ կապում:

Խաղեր ցատկուուելով

21. Ա Ա. Տ Ա. Ն Ի Զ Լ Խ - Զ Լ Խ

Խաղացողները խմբւում են մի տափարակ տեղ, ընտրում են երկու մայր, բաժանւում երկու հա-

ևսար խմբի և «թաց ու չոր» անում:

Առաջին խմբի մայրը իւրայինների հետ առանձնանում է և ամեն մինին անուն է գնում: առաւելապէս կենդանական թագաւորութիւնից: Յետոյ գալիս ելնում են երկրորդ խմբի անդամների շալակը, որոնք շրջանձեկ կանգնում են միմեանցից փոքր ինչ հեռու: Շըրջանի մէջ նաև տեղը դնում են մի մեծ և մի փոքր քար և սրա մօտ կանգնում են մայրերը, առաջինը երկրորդի շալակն ելած: Երբեմն մայրերը կանգնում են ընկերների շարքում: Բ. խմբի մայրը լաւ դիտում է թէ հակոսակ խմբի անդամներից՝ որը ըրտեղ կանգնածի շալակն է եկել: Յետոյ արդէն Ա. մայրը ձախ ձեռքով ծածկում է Բ. առաջնորդի աչքերը, այնի բըռունցքով կամաց խփում գլխին և կանչում: «ԶԵ՛Խ-ՀԵ՛Խ», չը՛խ սատ սնի չըխչըխ. Էյ զիտի կատու, մկներ են հաւաքւել է, ջնորդի ցոյց տնիւ»:

Կատու անուն կրողը կամաց ցած է գալիս, մօտենում բնին, մայրերի առջև դրւած երկու քարին, և փոքր քարով մի քանի անգամ խփում է մեծին ու զառնում իր տեղը, ելնում շալակը: Ամենքը լուս սպասում են և Բ. մայրը գեռ աչքերը խփած, պիտի ասի «կատի» իսկական անունը: Եթէ չը գտաւ, բոլորը իջնում են. ա. մայրը առանձնացնում է կատին և անունը փոխում: Նորից հեծնում են հետեւալներին և առաջնորդը նոյն կերպ մինին գուրս է կանչում:

Խաղը այսպէս շարունակում է մինչև որ Բ. մայրը տայ քարը խփողի իսկական անունը այն ժամանակ խաղը փոխում է և սրանը են հեծնում առաջիններին:

Մայրը աշխատում է ծաղրաշարժ և սրամիտ խօսքերով
դուրս կանչել, և կանչւածը խոտորնակ ճանապարհե-
րով է մօտենում բնին, որպէս զի տեղի դրութիւնից
Ք. մայրը չիմանայ ով լինելը:

22. Է Ա - Է Ա

Այս խաղը բոլորովին նման է «Սատանի չըխչըխ»,
խաղին, միայն տարբերում է նրանով, որ մայրերը
կանգնում են միւսների շարքում և յաջորդաբար միւս-
ների շալակն ելնում, և մի ձեռով իշու աշքերը խփե-
րով միւսով խփում են զլիխն և մի քանի մաս անկում
ու հարցնում. Էս, էս քանիս է»: Եթէ ուղիղ չանւանեց
մատների թիւը, բոլորը իջնում և յաջորդների շալակն
են ելնում և մայրը նոյն հարցը կրկնում է և երբ ու-
ղիղ անւանեն՝ նրանք սրանց շալակն են ելնում:

23. Կ Ա Զ Ե Մ

Վիճակով մինը կանգնում է բնում և կանչում:
— Կան եմ, կան եմ, կան եմ Աւետիսին (կամ ում
ուզում է), իսկոյն միւսները սկսում են խփել Աւետի-
սին, մինչև որ նա վազի գնայ բունը:
Կանչողը հարցնում է սրան.
«Ի՞նչ տանեմ»:

— Ապուր. կամ մի ուրիշ բան, — պատասխանում է
երկրորդը:

Մա մի ոտի վրա «ապուր», «ապուր» կրկնելով
առաջ է գնում. Բոլորը աշխատում են ձեռով խփել
սրան և փախչել. իսկ եթէ մինը բռնի, բոլորը թափ-

ւում խփում են բռնողին, մինչև որ նա փախչի բռնը:
«Ոտի վրա ցատկողն և նրա ընկերն ազատում են:
Նոր բռնածը միւնոյն կերպով ընկեր է կանչում և
շաբթիւակում խաղը: Եթէ մի ոտի վրա գնալիս յոգնե-
ցաւ նոյն կերպ գառնում է բռնը և ընկերն է գալիս:
Իսկ եթէ միւս ոտն էլ զրեց գետնին, այն ժամանակ
բոլորը վրա են թափում և խփում, մինչև որ նա
դուրս պրճնի նրանց ձեռքից և փախչի բռնը:

24. Թ Ո Յ Լ Տ Ո Ւ Ր Գ Ն Ա Մ

Երկու ընկեր մտնում են բռնը, իսկ միւս-
ները կանգնում են բնից բաւական հեռու: Մէկը հար-
ցնում է միւսին—«Թոյլ առը կնամ»—Եթէ ընկերն ա-
սում է «գնա», նա մի ստքով առաջ է գալիս, մնացած-
ները աշխատում են խփել նրան առանց բռնեկու:
Խաղը շարունակում է, ինչպէս «կաղ եմ» խաղը: Եթէ
բնի մէջ կանգնածը ասի «մի գնայ», ընկերը չը պէտք
է դուրս գայ, թէ չէ՝ լաւ ձեծ կուտի:

25. Ս Ա Լ Է Կ - Մ Ա Լ Է Կ

Վիճակով ընտրւածը բնից դուրս է գալիս
մէկ ստքով և աշխատում է ձեռով խփել ընկերներին:
Ընկերներն էլ ամեն կողմից խփում են նրան, սակայն
արագէս, որ նա չը կարողանայ նրանց զիաչել: Աւս որ
ձեռքով զիպաւ, նա է սկսում ցատկուտել մէկ ոտի վը-
րա, իսկ ինքը ազատում է:

26. Ա Թ Ո Ւ Ր Մ Ա

ա) Խաղացողներից մինը, որ ընտրւում է պլիկով

և կոչւում է էշ, կամ մողի, կամ ձիականգ, կզում է՝ ծնկները փոքր ինչ ծուած, մարմինը մէջքից կ'առած, թերը ծնկներին կոթնած, և զլուխը կախած, որ ցատկողների ոտաները գլխին չը դիպչեն: Նախ մայրը, ապա միւսները հերթով որա վրայից ցատկում են— հեռից վազում երկու ոտքը միասին խփում են գծի մօտ, որտեղ կանգնած է մողին, ձեռքերը դնում են կզողի մէջքին և վրայից ցատկում: Երբ բոլորը ցատկում են կզողը հեռանում է գծից, սկզբում երկու ոտ, այնուհետև էլի երկու ոտ: Թուչողները պարտաւոր են թոչել միշտ գծից: Ապա երրորդ անգամից յետոյ մողին փոխում է ամեն անգամ մէկ ու կէս ոտք և թոչողներն էլ իրաւունք ունեն գծից մինչեւ մոզու կանգնած տեղը մի տեղ ոտք խփելու: Խաղը նորոգուում է, երբ մինը չի կարողանում ցատկել կամ կտրւում է, և այս անգամ կզում է այդ կտրուղը:

բ) Մինը կզում է, միւսները մի-մի թաշկինակ ձեռքերին ցատկում են և ցատկած միջոցին թաշկինակները մոզու կոնակը դնում: Երբ այսպէս բոլորն էլ ցատկում են, խաղացողների կարգը փոխւում է, այսինքն ամենից վերջը ցատկողը ամենից առաջ է ցատկում և իր թաշկինակը առնում է մոզու կոնակից, առանց միւսները վայր զցելու: Իսկ եթէ մինը չի կարողանում թաշկինակն առնել, կամ իր թաշկինակի տեղ մի ուրիշինն է առնում և կամ իրն առնելիս, մի ուրիշը վայր է զցում, դառնում մոզի և կզում է,

գ) Մինը մէջքը փոքր ինչ ծուած և զլուխը կախ ձգած կզում է, աջ ոտք դնում է փոքր ինչ առաջ

թերը կողքերին հպած ձեռներով յենւում է ծնկին: Մի ուրիշը ցատկում է զրա վրայով և 10—15 ոտնաշափ նրանից հեռու նոյնկերպ կզում է: Երրորդը ցատկում է այս երկուսի վրայով և նոյնքան հեռաւորութեամբ կզում: Այսպէս՝ երբ բոլորը ցատկելով կը- զում են, առաջին կզողն է ցատկում բոլորի վրայից և կզում ամենից վերջը, յետոյ երկրորդը, երրորդը և այսպէս շարունակ:

27. Ս Ա Լ Ո Ւ Կ Ո Ճ ✕

Խաղացողների թիւը չի սահմանափակում: Վի- ճակով մինը ծալապատիկ նստում է կանաչ խոտերի վրա և զլուխը քաշ ձգում: միւսները հերթով հեռից վազում են, ձեռքերը դնում են նստողի մէջքի մօտ, գետնին և նստողի վրայով «թախլա» գառնում, թոչում:

Ով չը կարողացաւ թախլա դառնալ - թոչել, նա է նստում, իսկ նստողը թախլա է դառնում ամենից առաջ:

28. Բ Ո Լ Ո Ր Վ Ա Ն Ք Ի

Խաղացողներն ընտրում են երկու մայր, բա- ժանւում են երկու խմբի, թաց ու չոր անում և ընտ- րելով մի տափարակ տեղ՝ խաղն սկսում:

Կտրւած խմբի անգամները գլուխ գլխի են տա- լիս, միմեանց ուսերից բանում կանգնում են, ձևացնե- լով գրեթե:

Մայրը դնում է մի ձեռը գմբէթի վրա և արագ պտտելով նրա շուրջը՝ աշխատում է ոտով կամաց խը-

փել միւս խմբի անդամներից նրանց, որոնք թռչում, ենում են գմբէթի վրա, կամ այնտեղից իջնում փախչում են: Եթէ խփեց՝ խաղը փոխւում է, որանք բըռնուում և նրանք են թռչում:

Եթէ գմբէթի վրա թռածներից մինն ընկնի գըմբէթի մէջ, մայրը իրաւունք չունի նրան խփելու, մինչև որ վերջինս գուրս չը վազի: Երբեմն պայմանաւորւում են թոյլ տալ առաջնորդի շալակն ևս թռչելու և սա չը նայելով իր ծանր բեռին, այնուամենանիւ վազում է գմբէթի շուրջը, աշխատելով խփել մինին, առանց իրա ձեռքը գմբէթից կտրելու, որովհետեւ հակառակ դէպքում խաղը չի փոխւի:

29. Ե Ր Կ Ա Ր Է Շ

Երկու խմբի են բաժանւում, ամեն մի խըռքում լինում է մի մայր: Մի խմբի մայրը կանգնում է մի պատի մօտ, նրա ընկերներից մէկը գլուխը կռացնում է մինչև մօր գօտին և բռնում է նրա մէջքից, միւս ընկերներն էլ կռանալով և միմեանց մէջքից բըռնելով մի երկար շարք են կազմում: Երկուորդ խմբի անդամները ըստ իրենց ճարպիկութեան կարգով թըռչում են և նստում գրանց վրա: Եթէ թռչելու ժամանակ մէկի ոտքը գետնին կպաւ, դրանք յաղթւում են և իրենք են կանգնում, իսկ եթէ բոլորն էլ յաջողութեամբ թռան և նստեցին, վերջինը ծափ տալով համարում է առանց շունչ քաշելու մինչի ատար: Եթէ այդ համարելու միջոցին նստածներից մէկի ոտքը գետնին կպաւ՝ նորից յաղթւած են համարւում և դրանք են

կանգնում: Իսկ եթէ այս էլ աջող է անցնում, նորից են թռչում և այս անգամ 5-ով աւելի են հաշում:

Եթէ պատահում է որ կանգնածներից մէկը չըգիմանալով իր վրայինի ծանրութեանը ընկնում է, այն ժամանակ նրանց մօրը ծաղրելով ասում են միւսները՝ «իշեղ ինչի չես գարի տւել», ու նորից շարունակում խաղը:

30. ԹՈՒՄԲՈՒԽԼՈՒՄ-ԹՈՒՄԲՈՒԽԼՈՒՄ

Խաղացողներից մին ծալապատիկ հստում է: Սա կոչւում է մայր, մի ուրիշը, որ վիճակով ընտրում է և էլ է կոչւում, զլուխը սրա գոզը զրած՝ կզում է: Միւսները հերթով մէկ մէկ թռչում հեծնում են իշին ու ասում:

«Թումբուլում-թումբուլում էշակ»:

— Ուրտեղից եռ գալիս, — հարցնում է մայրը.

«Ախալցխայից, կամ մի այլ տեղից — պատասխանում է հեծնողը:

— Ախալցխա ինչ էիր անում, կրկին հարցնում է մայրը:

«Տանձ ու խնձոր էի առնում», ասում է հեծնողը, կամ մի ուրիշ բան, որով նշանաւոր լինէր Ախալցխան:

Գհանա, ու արի, — պատասխանում է մայրը, Եթէ հեծնողի պատասխանը ճիշտ է, այսինքն յիշել է իր եկած քաղաքի այն բանը, որով նա նշանաւոր է, հեծնողը իշնում և իր հերթին նորից է գալիս, իսկ եթէ սիալ է, օրինակ, «Ախալցխայում բամբակ էի առնում

կամ Շուլաւէրում պղինձ էի առնում», սա անցնում է իշու տեղը և նախկին էջը առաջինը հեծնում սրան:

Այս խաղի ուրիշ ձեզ այսպէս է. մայրը էշին մի
քաղաքի կամ գիւղի անուն է դնում. Եթե հեծողը
ասաւ թէ այդտեղից է գալիս ու տւառ հէնց այդ տե-
ղի անոնը, ինքը դառնում է էշ, իսկ նախկին էշը
ազատում է, դառնում է հեծող:

31. ԶԱՆԳԻ ՄԱՆԳԻ ԶԱՐՈՒԽԻ

Խաղացողները բաժանւում են երկու խմբի.
Վիճակով մի խումբը ուղիղ գծով կանգնում է և ըստ
ու ցուցամատ մատները բաց արած՝ այտերին յենում,
իսկ միւսները պարզում են, որ չը կարողանան այս ու
այն կողմ տեսնել: Միւս խումբը իրար, ետքից շարւած,
ձեռքերը կրծքի մօտ պտուտակածէ շարժում է և անց-
նելով կանգնած խմբի առջևից երառում է,

Զանգի մանգի չարուիսի,
Քթոց դրկենք մենք Նուիսի
Մէջը լիբը ծիրանի
Սև պառաւը թող տանի.

Երբ անցնում են խմբի ետևը մէկը յաճախ մօր ակնարկով, կամ ուղղակի ինքը ձեռները դնում է կան գնողներից - եշերից մինի մէջքին և առաջ քշում, հանում շարքից, իսկ մի ուրիշը հարցնում է. «Է՞, է՞, քեզ քշողը ո՞վ է»: Եթէ էշը առանց ետ նայելու կարողացաւ գուշակել, թէ ո՞վ է իրեն քշողը, ենում է քշողի շալակը, գալիս շարքի մօտ, ինքը՝ դառնում է քշող էսկ քշողը էշ: Իսկ եթէ չը գուշակեց, շալակում է,

Ետ է բերում քշողին և կանգնում էլի իր տեղը: Խա-
զը այսպէս երկար շարունակում է:

Խաղեր բաշկիակով

32. *ԲԵԿ ԵՄ, ԲԵԿ ԵՄ*

*) Ծանօթ. Վէգի հարթ երեսը՝ կոչւում է թռիսան, հանդիպակաց երեսը, որի եզրերը փոքր ինչ են՝ բարձրացած են—ալչու, միւս երկու կողմերը՝ փոստացածը ջիբ, ուսուցիկը՝ բոք:

բէկի հրամանը կպտարել: Երբեմն հրամանը լիովին դիռ
չը կատարած՝ բէկը ասում է՝ «Ներում եմ»: Իսկոյն
գղիրը գալքարում է խփելուց, նստում են տեղերը և
հետևալին է գցում վէզը: Եթէ ալջու կանգնեց, գառ-
նում է բէկ, եթէ թոխան՝ գզիր, միայն երկու գէպ-
քումն էլ նախորդից թուրի մի հարւած է ընդունում
որպէս «խալաթ», իսկ եթէ բոք գայ, վէզը յանձնում
ընկերին, այն ինչ չիք եկած միջոցին բռնուում է և որ-
պէս գող կրում է պատիժ:

33. Մ Ա Տ Ա Ն Ի

Սյս խաղը բոլորովին նման է «Բէկ եմ, բէկ եմ»
խաղին, միայն վէտի փոխարէն խաղում են մատանիով:
Առնում են մատանին բռնը, վեր գցում, դաստակի
երեսին առնում և աշխատում առանց միւս ձեռի օգ-
նութեան եթէ բռնթ մատն անցկացնել՝ բեկ լինին, եթէ
ճկոյթը՝ գզիր, իսկ եթէ ոչ մինը, կամ վեր գցելիս
փոխանակ դաստակի երեսին կանգնելու՝ վայր ընկաւ,
լինում են գող:

34. ՓԱՓԱԽ ԵՑԵԼԻՌՈՒԿ

Խաղացողները շրջանաձկ պըպզում են և կոչ-
ում են հաւեր, իսկ մինը, որ կոչւում է շուն, վերց-
նում է մի թաշկինակ, եթէ խաղացողները աղջիկներ
են, կամ մի գտակ, փափախ, եթէ տղաներ են և պը-
տըտում է հաւերի ետեից.

Հաւերը լուս պըպզում են, ետեները չեն նայում,
չեն շարժում տեղերից և չեն ասում ընկերին, թէ

թաշկինակը նրա ետեն է դրւած:

Շունը պտաելով հաւերի շուրջը սրա նրա մօտ
կպանում է, ձեացնելով իբր թաշկինակը կոմ փափախը
նրա ետել վայր է ձգում և ասում:

«Տեսնեմ՝ հաւա հաւերիթ ածել է»:

Վերջապէս թաշկինակը ձգում է մինի ետել, այն-
քան հեռու, որ հաւը պպզած տեղից կարողանայ վերց-
նել, և շարունակում է ճանապարհը աշխատելով ցոյց
տալ՝ թէ դեռ ևս չի ձգել:

Հաւը եթէ նկատի, թէ թաշկինակը իր ետեն է
դրած, իսկոյն վեր է կենում. առնում թաշկինակը և
փաղելով շան ետեից խփում է նրան, մինչեւ որ սա գայ
պըպզի իր տեղը: Այսուհետեւ այս հաւը կը լինի շուն:
Իսկ եթէ չը նկատի, շունը շրջան է անում, գալիս
վերցնում թաշկինակը և խփում հաւին, վաղեցնում,
մինչեւ որ սա շրջան անելով կը գայ հորից կը պըպզի
իր տեղը: Շունը նորից է պտըտում, թաշկինակը մի
ուրիշի ետել դնելու:

Եթէ մինը շրջանի միջից անցնի, նրան «զըխլ» են
զարկում, կամ մի ուրիշ պատիժ տալիս:

35. Կ Ո Ւ Կ Ո Ւ Կ Ո Ւ Կ Ո Ւ Կ

Յուրոք խաղացողները շրջանաձկ պըպզում են,
իսկ մինը մի թաշկինակ ձեռին կանգնում է շրջանի
մէջտեղը, վերջինս կոչւում է շուն, իսկ մի մները ա-
քազադներ:

Աքազադները այս ու այն կողմից կանգնում կու-
կուլիկու կանչում և իսկոյն պըպզում են: Շունը աշ-

խատում է ձեռի թաշկինակով խփել աքաղաղին կանգանած ժամանակ և եթէ աջողի ինքը կը դառնայ աքաղաղ իսկ նա շուն:

36. Հ Ա Ի Կ Ո Ւ Բ

Խաղացողները միմեանց կից շրջանաձև նստում են, ոտների աղբըն ու ոլոքը եռանկիւնաձև կանգնեցրած: Մայրը վերցնում է մի թաշկինակ և ոտների տակից միմեանց տալիս խմբովին երգելով.

«Հաւկուր՝ արի, արի, քիշքիշ՝ գնա, գնա»: Շրջանի մէջ կանգնած է լինում սինը «շուն» որ աշխատում է բռնել թաշկինակը մինի ձեռին: Եթէ սա մէջքը դարձրեց նրան, որի մօտ գտնուում է թաշկինակը, վերջինս խփում է մէջքին, և թաշկինակը տալիս ընկերին, սա էլ միւսներին: Խըրաքանչիւր անդամ, երբ թաշկինակը պտտում, գալիս է առաջնորդի ձեռը, սա ցոյց է տալիս և համարում. «Մէկ լաշակ»: Եւ երբ երեք անդամը լրանայ, շանը բռնում խզզում են՝ կըսմթում են: Իսկ եթէ բռնեց մինի ձեռքում, երեք անդամ խփում է նրան, որի ձեռքում բռնեց թաշկինակը և նստում նրա տեղը, իսկ սա դառնում է շուն:

37. Ք Ո Ռ Մ Ա Մ Ի

Վիճակով մինի աչքերը կապում են, սա կոչւում է քոռ (կոյր) Մամի: Քոռ մամին պըզզում է և աղօթել է ձևացնում, իսկ միւսները շրջապատում են նրան և ձեռքերը սրա զլխին դնում, տանում բերանները, ձևացնելով երբ բան են ուտում: Քոռ մամին

հարցնում է. «Էտ ի՞նչ էք ուտում»: «Զիր ու չամիչ» պատաս խանում են միւսները: «Ինձ էլ տաք», խնդրում է քոռ մամին: «Լւացւի, տանք», ասում են երեխանները: Քոռ մամին նախ լւացւում և ապա սկսում է զետին շշափելով բան որոնել: «Էտ ի՞նչ ես կորցրել» հարցնում են երեխանները: «Հօրս ոսկի մատուքը», պատասխանում է քոռ մամին: «Ես եմ գտել, չեմ տայ» ասում են երեխանները, խփում մամին և փախչում: Մամին կոյր կոյր ընկնում է երեխանների ետելից, որոնք խփում և խուսափում են սրանից և երբ մինին բռնում է՝ բռնորը իսկոյն հաւաքը ու քանդում են սրա աչքակապը և նոր բռնւածին կապում: Խաղը նոյնկերպ կրկնում է:

ԹՐԿԵՐՈՎ ԽԱՊԵՐ

38. Կ Ո Ր Կ Ո Տ Ա Պ Ո Ւ Բ

Խաղացողներից մինը նստում է զետնին ձեռին մի երկու արշին երկարութեան թոկ բռնած: Մի ու ըիշն այս թոկի ծայրից բռնում և կանչում է. «Եկէք, եկէք, կորկոտ ապուրիս համը տեսէք»: Բոլորը գալիս մի մատ խփում են նստողի, ապուրի, զլխին՝ սաեւ լով. «Կորկոտ ապուր, համդ տեսնեմ»: Յետոյ ապուրի տէրը պաշտպանում է իր ապուրը, թոկի ծայրից բռն նածը պտտում է նրա շուրջը և միւսները նոյն խօսքերը կրկնելով աշխատում են խփել ապուրի զըլ-խփերը կը լինի մինին ոտքի ծայրով: իսկ եթէ խփի, խփողը կը լինի ապուր, իսկ նախկին ապուրը՝ տէր և պաշտպանող նոր ապուրին:

Գնդակով խաղեր

39. Ս Ա Յ Ի

Երկու երեխայ, կամ մի քանիսը երկու խմբի բաժնաւած՝ շրջանածէ չորում են: Նախ որոշում են թէ քանիսը պիտի «գնան» (գնդակին խփեն), որ խաղը տանեն: Սովորաբար որոշում են 500—1000 և հազիւ տելի: Ապա որոշում են թէ «50-ին կամ հարիւրին բըսնել կայ», այսինքն յիսուներորդ կամ հարիւրերորդ անգամ գնդակին խփելուց յետոյ, բանեն գնդակը, հանգըստանան և նորից խաղան, թէ ուղղակի շարունակեն: Խաղը սկսելուց առաջ «գնդակը ծախում են», այսինքն առաջին խաղացողը համաձայնում է հաշւել թէ միւսը արդէն 30-60 գնացել է: Խաղացողը գնդակն առնում է բուռը, կամաց խփում է գետնին, բոլորը միասին երկարացնելով հաշւում են մէկ, գնդակը վեր է թռչում, սա առանց բանելու նորից է խփում և հաշւում երկու: Այսպէս 3, 4 և այլն մինչև որ գնդակն ընկնի վայր: Յետոյ միենոյն կերպ խաղում է միւսը: Խմբի բաժնաւած մէջոցին, նախ խաղում է մի խումբը և յետոյ միւսի, ընկերոջ համարածը շարունակելով:

Գնդակը վայր ընկնելիս՝ խաղացողը մի քանի անգամ խփում է գնդակին և «հանում գնդակը» ու շարունակում:

40. Զ Ա Ր Խ

Երկու երեխայ կամ երկու խումբ նախապէս որոշում են թէ մինչև քանիսը գնացողը տանի և «ծա-

խումբ են գնդակը»: Առնողը՝ կանգնած խփում է զընդակը գետնին, պտտում է և հաշւում մէկ, գնդակը վեր է թռչում, սա մի կամ մի քանի անգամ, նայած պայտանին, խփում է դաստակով գնդակին, պտտում է և երկուս, հաշւում: Խաղը այսպէս շարունակում է և խաղացողները փոփոխում են, երբ գնդակը վայր է ընկնում:

41. Զ Ա Ր Ն Ե Ն Ք Դ Ա Ռ Ն Ա Ն Ք

Երկու հոգի յաջորդաբար խփում են գնդակին ու չարիս դառնում, պտտում, և ով վրիպեց՝ նա տարւում է:

Սրան նման է «կանչել» խաղը, որը խաղում են ոչ պակաս երեք երեխաներից: Գնդակին խփողը տալիս է մինի անունը, որը և խփում է գնդակին, չարիս դառնում, կանչելով մի ուրիշին:

42. Ք Ա Ր - Թ Ո Փ Ի

Տնկում են մի քար, որ կոչւում է «ապա», ձեռք են բերում մի գնդակ և մի թիւակ—մի արշինաչափ փայտ, որի մի ծայրը տափակ և լայն է, իսկ միւսը բարակ և կլոր: Խաղացողներից մինը կանգնում է բընկում, իսկ միւսները, որոնց թիւը չի սահմանափակւում, բնից մի քանի սաժէն հեռու: Բնում կանգնուը ձախ ձեռով վեր է ձգում գնդակը և աջ ձեռի թիւակով խփում: Ներքե կանգնողները աշխատում են բռնել զընդակը, և եթէ մինը բռնի, ինքը կերթայ կը խփի զընդակը, իսկ եթէ չը բռնեն, հասնողը վերցնում է գնդակը

և ձորով բռւնը, աշխատելով խփել քարին: Եթէ դիպարեց, ինքը կերթայ խփելու, իսկ եթէ ոչ՝ դարձեալ նախկին խփողը կը խփի:

43. ♂ U. ♀ U. h 0 r b. ♀ 7 7 u u

Խաղացողները բաժանւում են երկու խմբի և
5—8 սաժէն հեռաւորութեամբ միմեանց հանդէպ ուղիղ
գծով կանգնում են: Սրանք կոչւում են էշեր: Առաջին
խմբից մինը ձգում է գնդակը դէպի երկրորդ խումբը:
Եթէ այս խմբից մինը կարողացաւ բռնել գնդակը,
բռնողը գնում կանգնում է առաջին խմբի ետքը և կոչ-
ւում է թագաւոր: Յետոյ երկրորդ խմբից են ձգում
գնդակը դէպի առաջին խումբը, և եթէ մինը բռնում
է, բռնողը զալիս է այն խմբի ետքը կանգնում է,
կոչւում է թագաւոր: Այսպէս՝ յաջորդաբար զցելով
թագաւորները շատանում, էշերը քչանում են: Եթէ մի
կողմի ոչ թէ էշերից, այլ թագաւորներից մինն է
բռնում գնդակը, այն ժամանակ երկու խմբի թագաւ-
որներն էլ նստում են էշերի մրակ ուսումնական

44. U.S.U.T.P. ZNP

Բոլոր խաղացողները միմեանց մօտ մի-մի փոս
են փորուժ, մօտաւորապէս 4 վերջոկ շրջապատով ու
երկու վերջոկ խորութեամբ: Այս փոսերը կոչւում են
սատանի հորեր, և իւրաքանչիւրը պատկանում է մի-
նին, իսկ սրանց բոլորի մէջտեղի հոսը կոչւում է կը-
րակ և առէր չունի: Հորերից 2—3 արշին հեռու զծում
են մի գիծ, կամ զնում մի քար, նշանակերրու այն բուն:

Յետոյ հերթով մէկ մէկ կանգնում են բնում և գնդակը գլորում դէպի հորերը, աշխատելով գցել «կրակի» մէջ: Եթէ հորերի մէջ ընկն ի, առայժմ ոչինչ չի հաշվի և գնդակը կը գրուի յաջորդը, բայց երբ «կրակն» ընկաւ, իսկոյն բոլորը փախչում են զանազան կողմեր, գնդակ գցողը առնում է գնդակը և գցում մինի ետկից: Եթէ դիպաւ՝ վերջին լինում է է՛, ինքը՝ հեծնող, իսկ եթէ ո՞չ՝ ընդհակառակը:

Եղանակառակարգը՝ է բնում, իսկ հեծնողը ենում աղ-
բա շալակը՝ էց գնդակը գլորում է դէպի հորերը՝ աշ-
խատելով զցիկամ իր, կամ կրակի մէջ։ Եթէ իր հորն
ընկաւ, ինքն է ենում հեծնողի շալակը, և սա գլո-
րում է գնդակը, իսկ եթէ կրակն ընկաւ, բոլորը փախ-
չում են, շալակն ենողը վայր է թոշում և ասում՝ օ ես
կրակ, որով ազատում է խփելու վտանգից, իսկ էց վ-
առնում է գնդակը և զցում փախչողներից մինի ետե-
ից։ Եթէ դիպաւ սա զառնում է էշ, իսկ ինքը հեծնող,
իսկ եթէ չը դիպաւ, հակառակը։

իսկ իթէ գնդակը ընկնի մի ուրիշի հոր, այս սա
մանակ այդ հորի տէրն է ենուում իշու շալակը: Եթէ
գնդակը ընկնի հեծնողի հորը, սա քաշում է իշու ա-
կանչը, բայց եթէ երեք անգամ միմեանց ետևից կըրկ-
նեի առ, այն ժամանակ բոլորը խըզըում են հեծնո-
ղին - խտացնում և կսմըթում են: Գնդակը եթէ ոչ
մի հոր չընկնի, միևնույն դրութեամբ կը կնում են
մինչեւ ընկնելը:

45. ԱԽՊԵՐՍ ԴՈՒՄԿԱԲ, ԶԱԴԻ Է ԵՐԱԾՈՒ
ԽԱՂԱԳՈՂՆԵՐԸ, ոՐՈՆց թիւը չի սահմանափակ-

ւում, բաժանւում են երկու խմբի, գծում են 5—10 սաժէն տրամագծով մի շրջան, վիճակով մի խումբը մտնում է շրջանի մէջ, մէջը մէջքի տալիս և գոգերը բռնում: Միւս խումբը փոքր ինչ հետանում է, մի գընդակ ծածուկ վերցնում է մինը և բոլորը ձեռքերը փեշերի տակ դրած ձևացնում են իրը թէ զնդակը իրենց մօտն է ու շրջելով շրջանի շուրջը՝ ասում: «Ախտէրս դուրգար, չադր է շինում», Յարմար առիթ զանելով զնդակ պահողը խփում է զնդակը շրջանի մէջ եղողներից մինին և փախչում: Փախչում են և սրա բոլոր ընկերները: Շրջանի մէջ եղողներից մինը, սովորաբար զարկւածը, վերցնում է զնդակը, եթէ միայն շրջանի մէջ է մնացել, և զցում զբսիններից մինի ետքից: եթէ դիպաւ՝ մեռնում է վերջինս, իսկ եթէ չը դիպաւ՝ մեռնում է խփողը:

Կամ զբսինները կանգնում են շրջանի երկու ծայրերի մօտ հակառակ կողմերում և զնդակը բարձրով զցում միմեանց: Եթէ զբսիններից մինը կարողացաւ զնդակը բանել, իսկոյն «առանց պաղեցնելու» խփում է ներսիններից մինին: Եթէ դիպաւ՝ վերջինս մեռնում է, իսկ եթէ ոչ մեռնում է խփողը: Իսկ եթէ զնդակը առանց դիպչելու շրջանի մէջ մնաց, զբսինները փախչում են, իսկ ներսիններից մինը զցում է զնդակը նըրանցից մինի ետքից, եթէ դիպաւ՝ մեռնում է՝ իսկ եթէ չը դիպաւ, իրենց պայմանի համեմատ խփողը կամ մեռնում է կամ չի մեռնում:

Խաղը այսպէս շարունակում է մինչև որ մի որպէս է կողմը բոլորովին մեռնում է, կամ մինին խփած

իջոցին՝ մաս զնդակը բռնում է, և կամ զբսինները գընդակը միմեանց զցած միջոցին, ներսինները բռնում են, այդ պատճառով ներսինները շարունակ վագում են շրջանի այն կողմը, զէպի ուր թռչում է զնդակը: Եթէ շրջանի այն կողմը, զէպի ուր թռչում է զնդակը: Եթէ շրջանի այն կողմը բռնում է, այն ժամանակ խաղացողները փոփողակը բռնում է, այն ժամանակ խաղացողները փոփողակը բռնում է, այն ժամանակում:

Փայտերով խաղեր

46. Է Ծ - Է Ծ

Խաղում են միայն տղաները: Պտտրաստելով իւրաքանչիւրը իր համար մի-մի ձող, գծում են գետնին մի ուղիղ գիծ և բոլորը հերթով՝ կանգնելով զծին, ձգում են ձողը ոտների միջով, գետնի երեսով, հակառակ կողմը ուժ ձողն որ ամենից մօտն է, նա մէկ շնչով «էծ-էծ» կամ «կտիկ», կտիկ, կաթ տուր» ասելով՝ վագում և բոլոր ձողերը հաւաքում բներում է ասելով՝ վագում և բոլոր ձողերը հաւաքում բներում է, միևնոյն կերպ զծի մօտ բունը: Եթէ կարողանում է, միևնոյն նորից հն ձգում, մինչն որ մինը սխալում է, շունչ է առնում կամ ձող է թողնում: Որտեղ որ ձայնը կտրւեց կամ չը հաւաքած ձողը մնաց, դնում են զրի պողի, մօր, գտակը, կամ մի այլ նշան: Մայրը, զրի պողի, մօր, գտակը, կամ մի այլ նշան: Միւս պողը, իր ձողը ձեռին կանգնում է նշանի մօտ: Միւս ները հերթով կանգնում են առաջի բնում և աջ ձեռները հերթով կանգնում են առաջի բնում և աջ ձեռները գով զցում իրենց ձողը զէպի նշանը, աշխատելով խփել նըրան ու հեռացնել: Եթէ ոչ որքի չի դիպչում, խաղը սկզբից է կրկնում:

Եթէ մէկը խփում է, ատամները փակած մի ոտի

Վրա թոչկոտելով, գնում վերցնում է իր ձողը և ետ գալիս: Այս ժամանակ մայրը՝ «մածուն, մածուն, մակրթես, երթաս, դաս, լկրթես» ասելով, նայում է նրան, և եթէ սա ատամները բանայ կամ երկու ոտը միասին գետնին դնի, իսկոյն «զըխկ» է ասում: Այն ժամանակ փոխում են նրանք իրենց դերերը:—Մայրը գնում է բունը խփելու, իսկ խփողը լինում է մայր, գնում է իր նշանը և կանգնում մօտը:

Եթէ գցողը չի կարողանում խփել նշանին, ձողը ընկած տեղը մնում է, մինչև բոլորը գցում վերջացնում են, իսկ եթէ ձողը նշանին չի համում, մայրը վերցնում և մի կողմէ նետում, ուր և մնում է, մինչև որ բոլորը մի անգամ գցում են. յետոյ մնացած և չը հասած ձողիկների տէրերը ի միասին ատամները փակած մէկ ոտի վրա թոչկոտելով գնում վերցնում, ետ են բերում իրենց ձողերը նորից գցելու համար: Մայրը միենոյն խօսքերը կրկնելով աշխատում է «զըխսկ» ասել և փոխել պաշտօնը: Ամենից վերջը մայրն է կանգնում զծի մօտ ու իր փայտով նշանին խփում. Եթէ զիպցրեց, ազատում է իր նշանը, և խաղը նորից է սկսում: Իսկ եթէ չի զիպչում, խաղացող՝ երը վերցնում են մօր նշանը և միմեանց ձգում: Մայրը պէտք է նրանց ձեռքերից նշանը խլի ու մէկին նրանով զարկի: Եթէ դիպաւ, խաղը սկսում է նորից:

47. Յ Ո Պ - Յ Ո Պ

Խաղացողների թիւը չի սահմանափակւում իւրաքանչիւրը ունենում է մի ձող: Մայրն առնում է

բոլորի ձողերը, երկու ձեռով բանում մէջ տեղից և զլիի վրայով զցում ետև. ում ձողը որ ամենից հեռու ընկաւ, նա իրաւունք է ստանում ամենից առաջ խաղալու և ձողն էլ գետնին առաջին տեղն է գնում: Յետու մայրը զցում է նոյնպէս մնացած ձողերը և ամենից հեռու ընկածը գետնին դրած առաջին ձողից մի և կէս ստնաչափ հեռու են դնում: Այսպէս կրկնում է մի քանի անգամ, և միւս բոլոր ձողերը հերթով մէկ ու կէս ստնաչափ հեռաւորութեամբ միմեանց զուգահեռական շարուում են գետնին:

Խաղը սկսում է առաջին ձողի տէրը. մի ոտի վրա նա թոչում է «յոպ-յոպ» ասելով և նախ առաջին ձողից մինչև վերջին ձողը, այսպէս որ ոչ ձողին դիպչի, ոչ էլ միւս ոտը գետնին դնի, յետոյ ոլրապտոյտ անցնում է ձողերի արանքներով և ապա զարձնելով երեսը ձողերի երկարութեամբ, կողբով նախ առանց ձողերը կոխելու և յետոյ կոխոտելով՝ թոչում է իւրաքանչիւր ձողի վրայով: Եթէ այս բոլորը անթերի կատարում է, միմիայն մի ոտով, ան ժամանակ իր ձողը վերցնում և զուրս է գալիս խաղից: Իսկ եթէ վրիպում է, վերցնում է իր ձողը և դնում ամենից վերջը, սպասելով հերթի՝ միւս անգամ խաղալու: Այսպէս խաղում են բոլորը՝ բացի վերջին երկուսից: Վերջնթերը իր ձողը դնում է ընկերոջ ձողի մէջտեղը խաշածն, 6 անգամ շուրջը մէկ ոտի վրա թոչկոտում, յետոյ մէկ անկիւսից զիմացի անկիւնը 6 անգամ. եթէ տջողութեամբ վերջացրեց, ինքը հեռանում է, իսկ ձողերը մնում է գետնին: Սկսում է խաղալ վերջինը վերջն-

թերին բոլորովին նման, միայն իր ձողը գնում է խաչաձև ընկերոջ ձողի վրա վերևից: Եթէ աջողութեամբ վերջացրեց՝ ազատում է պատժից, իսկ եթէ ոչ՝ ընկերները կապում են որա աչքերը, ձեռը տալիս են մի ձող: Վերջնթեր խաղացողը ենում է շալակը. մի ուրիշը մի ձող ցցում է գետնին, ծայրին անց է կացնում մի գտակ և մի անգամ ցոյց տալիս պատիճ կրողին՝ նախ քան նրա աչքերը կապելը: Պատժողը վերջնթեր խաղացողին շալակած կոյր-կոյր առաջ է գնում և երբ աջողացնում է ձեռի ձողով խփել գտակին ու վայր գցել՝ ազատում է:

48. Հ Ո Ր Թ

Խաղում են երկար ձողերով: Նախ փորում են մի փոս, մօտը գնում մի բռաջափ քար կամ ոսկոր, որ հորթ է կոչում: Մինը ձեռի ձողով խփում, առաջ է գլորում հորթը «արածելու» և անշանում է մինին նոյնն անհելու, սա ևս իր հերթին կանչում է մի ուրիշին և այս այսպէս, մինչեւ որ մինը չըկարողանայ ի փել հորթին: Այդ ժամանակ այդ վրիպողը կոչում է «մայր» և աշխատում է հորթին խփելով «արածելուց» ետ դարձնել, զցել փոսը: Իսկ միւսները, որ գայլ են կոչում, աշխատում են խփել, հեւացնել փոսից: Մայրը միենոյն ժամանակ աշխատում է ձեռի ձողով խփել գայլերին և եթէ աջողի, խփածը կըլինի մայր, իսկ ինքը գայլ: Խաղը վերջանում է՝ երբ «հորթը» կցում են փոսը:

49. Թ Ո Ւ Թ

Ինից բաւական հեռու մի փոս են փարում և նրա մէջ կանգնեցնում են կովի կամ եղան ոլոզի կտոր, որ թուր է կոչում: Մայրը կանգնում է նրա մօտ և պաշտպանում: Միւսները բնից փայտերը շպրտում են և աշխատում են թութը պարկեցնել, իսկ մայրը աշխատում է ոոկորը նորից տեղը քշել ու կանգնեցնում է: Փայտը ձգիլուց յետոյ պէտք է փայտն ազատել, նուրից շպրտելու համար: Ում աջողում է առանց մօր փայտով զարնւելու ազատել, նա կանգնում է բնում և իր հերթին սպասում: Պատահում է որ մայրը փոխանակ թութը պաշտպանելու, ընկնում է միւսների ետից, որ փայտին չը հասած՝ խփի նրանց. այդ միջոցին միւսները պարկեցնում են թութը ու խփելով հեռացնում: Մայրը պէտք է թութը խլի նրանց մահակների տակից, բերի կանգրեցնի փոսի մէջ, աշխատելով միաժամանակ դիպցնել միւսներին, որ ինքն ազատում ում որ խփեց, նա գառնում է մայր:

50. Կ Ծ Ի

Բաժանուում են երկու մասի. գործիքներն են, մի երկար փայտ, մօտ $1-1\frac{1}{2}$ արշին, և մի կարճ փայտ — մօտ 3 վերշ. Երկարը կոչում է ջոխի, իսկ կարճը կտիր: Գետնին մի փոքրիկ փոս են փորում, որ կոչում է բուճ. մի խումբը կանգնում է բնի մօտ, իսկ միւս խումբը հեռանում է: Մ. խմբից ամեն մէկը ցցում է երկու տհոսակ, այսինքն առաջին երեք անգամը կտիր

գոխում է ջոխու ծայրին և թոցնելով խփում, յետոյ ամեն անդամ նա ջոխին դնում է բնի վրա, իսկ հակառակ կորդները զցում են կտին. եթէ ջոխուն խփեցին, կը նշանակի խաղացողը կտրւեց այս անդամ, իսկ եթէ ոչ նա երեք անդամ այդ ձևով (որ կոչւում է մուճուր) զցելուց յետոյ ձգում է ռտաշուր, այսինքն կտին ձախ ձեռքով ծուլ է անում և ջոխով աջ ձեռքով խփում, հակառակորդները աշխատում են կտին բռնել. եթէ բըռնեցին, դա նորից համարում է կտրւած, իսկ եթէ կը տին գետին ընկաւ, ընկած տեղից ա խատում են այնպէս զցել, որ բնի մօտ ընկնի—այնչափ մօտ, որ բըռնի և կտու հետառորութիւնը ջոխու տարածութիւնից քիչ լինի, եթէ աջողւեց, խաղացողը նորից կտրւած է համարում, իսկ եթէ ոչ, խաղացողը ջոխու երկարութեամբ չափում է բնի և կտու ընկած տեղի տարածութիւնը և ամեն անդամ գումարում է մինչև տասը լրանալը: Երբ տասը լրացաւ, նա համարում է ողջ—այսինքն՝ որքան էլ որ այդ օրը խաղալու լինեն և որքան էլ իր ընկերները տարւեն, բայց երբ հերթը իրեն եկաւ, նա երեք մուճուր չի խփելու և երեք չի համարւու: Երբ մէկը ողջ է, նա իրաւունք ունի իր ընկերներից մէկի փոխարէն խաղալ և նրան էլ ողջացնել—կամ եթէ այդ չի ուզում և շարունակում է տաշուր խփել և չարչարել հակառակորդներին, դա կոչւում է «զորվածիի»: Երբ պատահում է որ Ա. խմբի բոլոր անդամները կտրում են, լրանք համարում են յաղթւած, ջոխին ու կտին թողնում են բնի մօտ, իրենք անցնում են ցած, և Բ. խումբն է գալիս և խաղ սկսում:

Քարերով խաղեր

51. Կ Ը - Կ Ը

Խաղում են միայն երեք երեխայ բռաչափ երեք բարով: Հերթով մինը առնում է երկու քար ձախ ձեռքը, իսկ երրորդը աջ: Երրորդով խփում է երկու քարին և վայր զցում: Եթէ քարերը միմեսնցից մի ոտնաչափ հեռու ընկան, այն ժամանակ վերցնում է մինը, զբանով խփում միւսին և ապա սրանով երրորդին: Խաղն այսպէս շարունակում է, մինչև որ մինը վրիպի, քարերը միմեանց չը դիպչեն կամ վայր զցած միջոցին միմեանցից մի ոտնաչափ հեռու ըլ լինեն: Այն ժամանակ այս վրիպողը դառնում է էշ, և եթէ երկրորդ խաղացողը աջող խաղաց, ելնում է իշու շալակը և սպասում, մինչև որ երրորդը խաղայ, վերջացնի: Եթէ սա էլ աջող խաղաց, ինքը հաճում է իշու շալակը, իսկ երկրորդը խաղում է: Այսպէս շարունակում է, մինչև որ մինը վրիպում է: այն ժամանակ նախկին էշը ելնում է այս նոր իշու շալակը, իսկ միւսը խաղում: Եթէ խաղի սկզբին երկուսը միմեանց ետեից վրիպում են, այն ժամանակ առաջին վրիպողը ելնում է երկրորդ վրիպողի շալակը:

52. Լ Է Պ

46. Խաղացողները բաժանուում են երկու խմբի, գետսին գծում են մօտ $3\frac{1}{2}$ սաժէն մեծութեամբ մի շըրջան, միզ, շրջապատի վրա գնում են մի կլոր քար, որ

կոճիկ է կոչում և իւրաքանչիւրը մի մի տափակ քար;
 լէպիկառած շինում է»—կոճիկի մօտ կանգնած՝ դցում
 են լէպիկները շրջանից դուրս։ Յետոյ հիւթով—ուժ
 լէպիկը բարձր է—նա զցում է առաջինը—խփում են
 կոճիկին։ Առաջին խփողը շարունակում է խփել միշտ
 իր լէպիկի ընկած տեղից, մինչև որ փրստ է գալիս—
 չի դիպչում կամ կըուէ լինում—լէպիկի և կոճիկի մէջ
 մի ոտնաչափից պակաս տարածութիւն է մնում, և այս
 ժամանակ ունենում է», դադարում է խփելուց։ Յետոյ
 միւս ընկերներն են խփում կոճիկին, բայց առաջին
 անգամ ոչ թէ իրենց ելած տեղից, այլ լէպիկի մօտից։
 Այսպէս մի խումբը քշում հեռացնում է կոճիկը շըր-
 ջանից։ Երբ մի խմբի բոլոր անդամները մնունում են,
 միւս խումբն է խփում, և քշում կոճիկը դէպի շրջանը։
 Թէ հասցըին կոճիկը շրջանին, ազատում են պատժից,
 և խաղը նորից է սկսում, իսկ եթէ ոչ՝ առաջին խմբի
 անդամները ելում են սրանց շալակները և կոճիկի կե-
 ցած տեղից գնում մինչև շրջանը։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Խաղեր առանց զործիքի

	Երես
1. Գառն ու գայլը	6
2. Զիտամբին	6
3. Հարայ-մօլլա	7
4. Դալլաք բօրա	7
5. Ազափա	8
6. Աչքախըփուկ կամ պահմըտոցիկ	9
7. Լալօյինի	10
8. Տըզ-տըզ	11
9. Չոբան-չոբան	12
10. Էս տարայ	13
11. Չուռ առայ	13
12. Գայլը ազէսին հասաւ	14
13. Պուտ պուտ	14
14. Ռտք համրել	15
15. Հրեշտակ և սատանայ	16
16. Ալաբէկի կատուն	17
17. Անա մարիկ, որ չեմ տայ	18
18. Դմբօ-դմբօ	19
19. Բաս նվ տարաւ	20
20. Աչքինփոցիկ	20

Խաղեր ցատկուելով

21. Սատանի չըխ-չըխ	22
22. Էս-էս	22
23. Կաղ եմ	23
24. Թոյլ տուր դնամ	23
25. Սալէկ-մալէկ	23
26. Աթուրմա	25
27. Սալ ու կոճ	25

28. Բոլորվանքի	25
29. Երկար էշ.	26
30. Թումբուլում-թումբուլում	27
31. Զանգի մանգի չարուխի	28

Խաղեր թաշկինակով

32. Բէկ եմ, բէկ եմ	29
33. Մատանի.	30
34. Փափախ ետեղուկ	30
35. Կուկուլիկու	31
36. Հաւկուր.	32
37. Քոռ մամի	32

Թոկերով խաղեր

38. Կորկոտ ապուր.	33
-------------------	----

Գնդակով խաղեր

39. Սայի	34
40. Զարխ.	34
41. Զարնենք զառնանք	35
42. Քար-թոփի	35
43. Թագաւորի զնդակ	36
44. Մատանի հոր.	36
45. Ախալէրս դուրկար, չագր է շինում	37

Փայտերով խաղեր

46. ԷՇ-ԷՇ	39
47. Յոպ-յոպ.	40
48. Հորթ.	42
49. Թոռթ.	43
50. Կտի	43

Քարերով խաղեր

51. Պըտ-պըտ	45
-------------	----

ՀՀ Ազգային գրադարան



NL0315041

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

- I Երեխայի կրթութիւնը մինչև 6-տարեկան հասակը—
Հենրիկ Վերնիցի թարգմ. Ստ. Լիսիցեանի 25 կ.
II Երեխայի բունը—Վերենիուսի, թարգմ. Ստ. Լիսից
ցեանի: 15 կ.
- III Երեխայի ազատութիւնը, Կ. Հ. Վենտցելի, —Մհ
ծերն ու փոքրերը—ալ կ. Խանճկաջնի, թարգմ.
Ստ. Լիսիցեանի: 15 կ.
- IV Սովորութիւնները, Նրանց նշանակութիւնը ու կըր-
թութիւնը—Կ. Ենիցեկու, թարգմ. Մ. Աղ. և
Ստ. Լ. 15 կ.
- V Պարզենելն ու պատիժները ընտանեկան դաստիա-
րակութեան մէջ—Ֆեսենկօի, թարգմ. Մ. 15 կ.
- VI Ո՞րտեղից է աշխարհ եկել քո փոքրիկ եղբայրը—
Գալանգառէրի, թարգմ. տ. Հ. Թոփչիանի: Ծո-
սօթացքէք կեանքի ծագման հետ—Տիկ. Սելմերի,
թարգմ. Ստ. Լ. 15 կ.
- VII Ընտան. զամատիարակութեան նպատակներն և հի-
մունք. —Պ. Կապտերեի, թարգմ. Միս. Աս. 15 կ.
- VIII Ինչն է հետաքրքրում և զարգացնում մանկան—
Ակոէլ Արստալ թարգ. Ստ. Լիսիցեանի 15 կ.
- IX Մանուկների աշխատանքն ընտանիքում. 15 կ.
- X Տղան և աղջիկը անցողական շրջանում Բուլ և ներ-
սէն. 10 կ.
- XI Մանկան ազատութիւնն ու ուրախութիւնը, Օտառ
կընսոտ. 20 կ.

Գինն է 20 ԿՈՊ.

Ճանապարհածախանը՝ 1 ո. ոչ պակաս գնողների հա-
մար խմբագրութեան վրա է՝ Տիֆլուս, Ռեդակցիա «Առքեր».